

Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 9-Ի ԹԻՎ ԹԻՎ 23-Ա, 25-Ա ԵՎ 26-Ա
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 23-Ա որոշմամբ հաստատված հավելվածի վերևի աջ անկյունում անհրաժեշտ է նշել «Հավելված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 9-ի թիվ 23-Ա որոշման» գրառումը:

Որոշմամբ ՀՀ Շիրակի մարզի Անուշավան համայնքի 2020 թվականի երկրորդ եռամսյակի բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումը պետական լիազորված մարմնի սահմանած ձևաչափին համապատասխան չի ներկայացվել: Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության՝ համայնքի ղեկավարը բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումը մարզպետին ներկայացնում է պետական լիազորված մարմնի սահմանած ձևաչափով:

Որոշմամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի 2020 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման մասին հաղորդման եկամտային և ծախսային մասերի գումարային ցուցանիշները չեն համապատասխանում 2020 թվականի հուլիսի 3-ին ՀՀ Շիրակի մարզպետարան ներկայացված «CLIENT-TREASURY» գանձապետական համակարգից ներբեռնված «Անուշավան համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի կատարման վերաբերյալ (02/01/2020-01/07/2020թ ժամանակահատվածի դրությամբ)» տեղեկատվության գումարային ցուցանիշներին:

Թիվ 25-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին, 2-րդ և 8-րդ կետերում նշված «1.6», «130.72» և «4.53» թվերը համապատասխանաբար փոխարինել «1.00», «130.68» և «4.73» թվերով, իսկ «Համայնքային սեփականության հողեր» և «Ընդամենը վարչատարածք» բառերից հետո նշված «390.09» և «1135.12» թվերը՝ «389.49», «1134.52» թվերով:

Թիվ 26-Ա որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասին:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
Հեռ. /0312/ 4-90-00*147
13.08.2020թ.